«Գյումրու թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Առարկան – Մայրենի /տարրական դասարաններ/

Հետազոտական աշխատանք

ԹԵՄԱ՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Կարինե Սանամյան

Խմբի ղեկավար՝ Փարկիթյան Անահիտ

Գյումրի - 2022

Բովանդակություն

Ներածություն…….3

Գլուխ 1. Ազգային և համամարդկային արժեքների համատեղ ձևավորման հարցը տարբեր հեղինակների դասագրքերում…….4

Գլուխ 2. Պատմվածքի և փոքրածավալ պատումների դասավանդման ժամանակ արժեհամակարգի ձևավորումը……10

Եզրակացություն …….. 19

Օգտագործված գրականության ցանկ……... 20

Ներածություն

Տարրական դպրոցի հիմնական նպատակն աշակերտի հոգևոր, մտավոր և ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանական հիմքերի և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումն է[1]: Ըստ էության, տարրական դպրոցը հետագա ուսումնառության համար անհրաժեշտ հիմնաքար է հանդիսանում, որի վրա կառուցվելու է ուսուցումը և ձևավորվելու է սովորողի արժեհամակարգը: Այս տրամաբանությամբ՝ չափազանց կարևոր ենք համարում հատուկ ուշադրության արժանացնել սովորողների արժեհամակարգի ձևավորմանը միտված աշխատանքների ուսումնասիրությունը՝ մանրակրկիտ վերլուծելով մայրենիի դասագրքերում զետեղված դասանյութը, մանավանդ կարևորվորելով մայրենի լեզվի ընթերցարաններում զետեղված գեղարվեստական նյութերի /հեքիաթ, առակ, բանաստեղծություն/ դերն ու նշանակությունը:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը մայրենիի դասավանդման ընթացքում՝ քննելով և վերլուծելով թեմայի առանձնահատկությունները, գնահատելով դրա ընձեռած դաստիարակչական և ուսուցողական նշանակությունը:

Մեր աշխատանքն առավել նպատակային դարձնելու միտմամբ՝ մայրենիի դասագրքերից առանձնացրել ենք պատմվածքների և փոքրածալավ պատումների ուսումնասիրությունը՝ քննելով դրանց ընձեռած հնարավորությունը արժեհամակարգ ձևավորման հարցում:

[1] Տե՛ս ՀՀ ԿԳ նախարարություն, Կրթական ծրագրերի կենտրոն, Կրթության ազգային ինստիտուտ, Տարրական դասարանների հայոց լեզու և մաթեմատիկա, Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների պլան և նյութեր /կրթակարգ, չափորոշիչներ, առարկայական ծրագրեր, ուսուցման նյութեր, նոր մեթոդներ/, Երևան, 2006, էջ 17:

Գլուխ 1. Ազգային և համամարդկային արժեքների ձևավորման հարցը տարբեր հեղինակների դասագրքերում

Բավական չէ ազգասեր ու հայրենասեր լինել, պետք է մի քիչ էլ լեզուն սիրել, պետք է սիրել, պաշտել այն, զգվել հարազատ մոր հարազատ լեզվին, այս սերը միայն կբանա մեր առջև մեր լեզվի անհատնում ճոխությունը, նրա նրբությունը և քաղցրությունը:

Ղազարոս Աղայան

Ի սկզբանե նշենք, որ ընթերցելով Հայաստանի Հանրապետության հանակրթության մասին օրենքը՝ տեսնում ենք, որ թե՛ աշակերտի, թե՛ մանկավարժի իրավունքների և պարտականությունների մեջ են ընդգրկված արժեհամակարգ ձևավորելը և ստանալը. «Սովորողը պարտավոր է՝ 2) ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել և տիրապետել համապատասխան հմտությունների և կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները» և «Մանկավարժական աշխատողը պարտավոր է՝ 3) նպաստել ուսումնական հաստատությունում սովորողների կողմից հանրակրթական (հիմնական և լրացուցիչ) ծրագրերի յուրացման և առարկայական չափորոշիչների ապահովման գործընթացին, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը, իրականացնել հանրակրթական ծրագրերը»[2]:

Արժեհամակարգի ձևավորման հարցում առանձնացրել ենք իրենց բնույթով և դասավանդման ձևերով բազմազան փոքրածավալ պատումները՝ կարևորելով սրանց դերն ուսումնառության ընթացքում: Հենց գեղարվեստական ստեղծագործություններն են, որ ազդելով մանկան փխրուն հոգու վրա, կարող են խոր հետք և անջնելի տպավորություն թողնել: Այս նկատառումով չափազանց կարևոր ենք համարում դասավանդման ընթացքում ուսուցչի ընտրած մեթոդները, իսկ աշակերտ և ուսուցիչ հաղորդակցման ժամանակ՝ հոգեբանական նուրբ մոտեցումները:

Ներկայիս կրթահամակարգի գերխնդիրներից կարելի է համարել ժամանակի պահանջներին համաքայլ ընթացքը, ճիշտ ուսուցումն ու դաստիարակումը՝ ապահովելով և հետ չմնալով ինչպես ընդունված համաեվրոպական ծրագրերից, այպես էլ արժևորելով ուսուցման և ուսումնառության նպատակային

[2] https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345

ուղղվածությունը և ազգային դաստիարակությունը, որը ի դեպ, շատ դեպքերում անտեսվում է կամ ձևական բնույթ է կրում: Ըստ էության, *կրթությունն անհատի, հասարակության և պետության շահերից բխող ուսուցման և դաստիարակության միասնական գործընթաց է՝ նպատակաուղղված տվյալ ժողովրդի և մարդկության հոգևոր ժառանգությունը, գիտելիքներն ու փորձը յուրացնելուն, պահպանելուն, հարստացնելուն և սերունդներին փոխանցելուն*[3], սակայն այս պարագայում, կարծում ենք, չափազանց կարևոր է պահել հավասարակշռությունը ինչպես ազգային, այնպես էլ համամարդկային արժեքների դաստիարակման ժամանակ, որը, անշուշտ, հնարավոր է իրականացնել համապատասխան ուսուցողական նյութերով: Նոր սերնդի՝ ժամանակին համաքայլ դաստիարակությունն ազգային հենքի վրա կարևոր է, մանավանդ որ յուրաքանչյուր պետության կրթական համակարգը տվյալ երկրի զարգացման ու հզորացման, ազգային անվտանգության ապահովման կարևոր գործոնն ու երաշխիքն է համարվում: Միշտ և բոլոր ժամանակներում պետության գերխնդիրներից է եղել երեխաների՝ իբրև ապագան կերտողների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը, ժամանակի ու տվյալ հասարակության պահանջներին համապատասխան պատշաճ վարքի ու մտածողության ձևավորումը:

Գիտակցելով և կարևորելով տարրական օղակում սովորողների հոգեբանական առանձնահատկությունները՝ գտնում ենք, որ այս պարագայում չափազանց կարևոր է ուսումնառությանը զուգընթաց մեծ ուշադրություն դարձնել ազգային դաստիարակության վրա՝ գնահատելով ազգային մշակույթն ու արժեքները, մանավանդ որ իբրև արժեքային համակարգի կարևորագույն իրողություններ՝ տարրական դպրոցն ավարտողը, ըստ պետական չափորոշիչների, *պետք է կարողանա գիտակցել մայրենի լեզվի և ազգային այլ արժեքների կարևորությունը և լինի դրանց կրողը*, անշուշտ, *հասկանալով ընդունված կանոններին հետևելու և մարդկանց իրավունքները հարգելու կարևորությունը, իմանա ազգային խորհրդանիշները՝ օրհներգը, դրոշը և զինանշանը*[4]: Գաղտնիք չէ, որ այսօր այս հարցում կան ծայրահեղական մոտեցումներ, որոնք իրենց սկզբունքայնությամբ գտնվում են

[3] Տե՛ս Հանրակրթության նպատակները և բարեփոխումների ռազմավարությունը:

[4] Տե՛ս Տարրական դպրոց, առարկայական չափորոշիչներ, Արժեքային համակարգ:

տարբեր բևեռներում: Ինչպես նշում էր Գարեգին Նժդեհը. «Հայրենասիրությունը – մարդկային առաքինության թագն ու պսակն է»,- ապա ընդգծում էր. «Այդ նվիրական զգացումը զարգանում է աստիճանաբար: Սկզբում՝ բնազդական, զարգանալով՝ նա դառնում է իմացական, ոգիանում է»: Անշուշտ, ինչպես մյուս բոլոր հատկանիշները, այնպես էլ սա անհրաժեշտ է դաստիարակել երեխաների մեջ դեռ մանկուց՝ նախակրթարանից ու տարրական դպրոցից՝ չթերագնահատելով կամ գերագնահատելով ընտանիքի դերը: Այս առումով մանավանդ մենք ուսումնասիրել և համեմատել ենք Վաչագան Ա. Սարգսյանի, Հեղինե Խաչատրյանի, Կարինե Թորոսյանի և Ելենա Ջիլավյանի «Մայրենի 3»[5] և Դավիթ Գյուրջինյանի և Նարինե Հեքեքյանի «Մայրենի 3»[6] դասագրքերը՝ հատուկ ուշադրություն դարձնելով ազգային դաստիարակությանը նպաստող ստեղծագործությունների և մասնավորապես պատմվածքի ունեցած դերին: Կարծում ենք, երկու դասագրքերի հեղինակներն էլ կարևորել են ազգային դաստիրակաությունը՝ ավել կամ պակաս չափով անդրադառնալով խնդրո առարկային, սակայն տվյալ պարագայում հետաքրքրականը մատուցման եղանկաներն են, որոնք սկզբունքային տարբերություններ ունեն: Այսպես, առաջին հեղինակային խմբի դասագրքում առանձնացված է վեց թեմա, որոնցից միայն մեկն է նպատակային կերպով ներկայացնում ազգային մշակույթը՝ «Հայրենի՛ք, ես մի զարկն եմ քո բազկի» /ՎՍՀԿԵ, Մ3, էջեր 81-104/, մյուսներում առաջնային պլանում է գտնվում համամարդկային արժեքների ներկայացումն ու յուրացումը, իսկ ազգայինը ներկայացվում է իբրև վերջինիս ածանցյալ, առանձին դեպքերում տողատակից բխող իրողությունը, որը ենթադրվում է, որ վերհանելու ու ներկայացնելու է ուսուցիչը: Օրինակ՝ «Ամենասովորական հրաշքներ» բաժնում, որտեղ զետեղված են հիմնականում հեքիաթներ, ի շարս այլազգի հեղինակների՝ բերվում են նաև հայ հեղինակների մշակած նմանատիպ հեքիաթներ կամ հրաշապատում զրույց-պատումներ: Այսպես՝ Ֆր. Ռաբլեի «Գարգանտյուա և Պանտագրյուել» երկից պատումի տեսքով առանձնաց-ված է փոքրիկ հատված, որին անմիջապես հաջորդում է Հ. Թումանյանի «Սուտլիկ

[5] Վաչագան Ա. Սարգսյան, Հեղինե Խաչատրյան, Կարինե Թորոսյան, Ելենա Ջիլավյան, Մայրենի 3, Երևան, 2009: Այսուհետև՝ ՎՍՀԿԵ, Մ3:

[6] Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան, Մայրենի 3, Երևան, 2008: Այսուհետև՝ ԴԳ,ՆՀ, Մ3:

Որսկանը» հեքիաթը: Ընդ որում, հիմնավորելով ու արմատավորելով վերոհիշյալ երկերի դաստիարակչական նշանակությունը՝ այսպես կոչված ենթաթեման[7] ամփոփվում է ինչպես նոր առաջարկվող առածով, այնպես էլ նախորդ դասարանում սովորած առած- ասացվածքներով և թևավոր խոսքերով /տե՛ս ՎՍՀԿԵ, Մ3, էջեր 140-141/: Կարծում ենք, նման մոտեցումը ինչպես գիտելիքի հիմնավորման, կրկնության, այնպես էլ աստիճանական հարստացման համար խիստ արդյունավետ է: Մեկ այլ դեպքում, օրինակ, Լուի Քերոլի հեքիաթից «Թագուհիներն ու Ալիսան» հատվածին անմիջապես հաջորդում է բառապաշարը հարստացնող առաջադրանք, որի համար իբրև բնագիր բերված է «Քաջ Նազար» հեքիաթից հատված /տե՛ս ՎՍՀԿԵ, Մ3, էջեր 122-124/: Այս և նման դեպքերում մանավանդ ուղենշային է ուսուցչի վերաբերմունքն ու ուղղորդումը ազգային մշակութային արժեքների գնահատման և ազգային դաստիարակության ձևավորման ու մշակման համար, որը, կարծում ենք, հայ ժողովրդի համար նաև ազգապահպանման կարևորագույն հանգամանքներից:

Անշուշտ, նյութի մատուցման հետաքրքրական տարբերակ է, երբ համամարդկայինի կողքին ներկայացվում է ազգայինը, սակայն, կարծում ենք, մանավանդ փոքրաթիվ ազգերի հարցում մոտեցումը ցանկալի է այլ տարբերակով լինի, երբ առաջնային և հիմնական տեղում է գտնվում հենց ազգային մշակույթի ներկայացումն ու գնահատումը՝ ցույց տալով դրա տեղն ու նշանակությունը համամարդկային մշակույթում: Իսկ Դ. Գյուրջինյանի և Ն. Հեքեքյանի կազմած «Մայրենի 3» դասագիրքը կարծես ներծծված է հայրենասիրական ոգով: Նախ առաջին դասը նվիրված է հենց *հայրենիք* բառի մեկնաբանությանը, որով փորձ է արվում սերմանել հայրենասիրության առաջին հատիկը՝ առավել շոշափելի դարձնելով հայրենասիրության առարկան: Սրան հաջորդում են հայրենիքին նվիրված բազմաժանր ստեղծագործություններ, ինչպես, օրինակ, Սուրեն Մուրադյանի «Հայրենիք», Լիպարիտ Սարգսյանի «Քո տունը» բանաստեղծությունները, Անահիտ Պարսամյանի «Սիզախոտի երազը» հեքիաթը /տե՛ս ԴԳ,ՆՀ Մ3, էջեր 4. 11, 13, 7/, որոնց մեջ ուղղակի կամ անուղղակի կերպով սերմանվում և զորացվում է հայրենասիրական դաստիարակությունը:

[7] Ենթաթեմա ասելով՝ հասկանում ենք առանձնացված մեծ թեմայի թեմատիկ տարբերակումները:

Դաստիարակչական նույն միտումն ու ուղղությունը շարունակվում է հիշյալ հեղինակների «Մայրենի 4» դասագրքում, որը սկսվում է հայի «Յոթ սրբության» բացահայտմամբ.

Հայը դարերով սիրով է պահել Յոթ թանկ սրբություն.
Հողը, պատիվը, շինարար ոգին, Հավատը, լեզուն:
Սուրբ անուններ են եղել դարերով Հայ ընտանիքը,
Եվ ամենից վեհ, ամենից լուսե Մայր հայրենիքը:
Սուրեն Մուրադյան /տե՛ս ԴԳ,ՆՀ, Մ4/

Տարրական դպրոցի ընթերցարաններին նախատեսված է անդրադառնալ անմիջապես այբբենարանն ավարտելուց հետո, այսինքն՝ երեխան գրաճանաչ դառնալով միանգամից սկսում է սովորել ու դաստիարակվել ընթերցարանների միջոցով ևս: Այդ իսկ պատճառով չափազանց կարևոր է այս ժամանակահատվածում ուշադրության կիզակետում պահել ինչպես մայրենի լեզվի վերաբերյալ գիտելիքները, այնպես էլ դաստիարակչական մոտեցումները, մանավանդ որ այս ընթացքում է դրվում դպրոցական գիտելիքի, ինչո՞ւ չէ նաև, գեղագիտական և լեզվական ճաշակի հիմքը: Այս ամենի կարևորությունը հստակ պատկերացնելով՝ ընթերցարանների նյութերը և գործնական առաջադրանքները մեծ խնամքով և հոգածությամբ են ընտրվում, մանավանդ որ ընթերցարաններում զետեղված նյութերն իրենց ձևով և բովանդակությամբ, ունեցած կրթադաստիարակչական բնույթով բազմազան են: Պետք է մեծ ուշադրություն դարձնել նաև ովորողների տարիքային խմբի առանձնահատկություններին: Այս տարիքում երեխայի ստացած գիտելիքներն ու տպավորությունները, կարելի է ասել, անջնջելի են, խորը հետք են թողնում՝ ուղեկցելով մարդուն մինչև կյանքի վերջը: Բնականաբար, անհրաժեշտ է նոր ձևավորվող անհատի, քաղաքացու մեջ սերմանել կայուն բարոյական հիմքեր, իրականության պահանջներից բխող դաստիարակություն: Ընդգծենք, որ մեր նախնիները, առաջնային համարելով դաստիարակությունը, զգուշացրել են. «… ուսուցիչները թող զգուշանան մտքով ուշիմ, բայց բարքով հանդուգն աշակերտներին ուսուցանելուց, ինչպես որ լավ ըեն անում նրանք, ովքեր սուրը տալիս են չարաբարոների ձեռքը: Որովհետև բնատուր ուշիմությունը, ձեռքբերովի գիտությամբ

զորանալով, նրանց մեջ դառնում է իրենց և ընկերների վնասի պատճառը»[8]: Անշուշտ, այս տեսակետ-զգուշացումը խիստ ծայրահեղական է իր բնույթով և բանավեճի առիթ կարող է հանդիսանալ, սակայն, պետք է ընդունենք, որ այստեղ կա ճշմարտության հատիկ. Մենք ևս վերոնշյալ տարիքային խմբի համար նախ կարևորում ենք դաստիարակությունը, ապա գիտելիքի հաղորդումն ու ընկալումը: «Եթե արտերը չմշակվեն, լավ բերք չեն տա. մանուկները եթե չդաստիրակվեն, առաքինություն չեն պտղաբերի: Մարդկանց կյանքում չկա մի բան, որ այնպես առաջնորդի դեպի առաքինություն, ինչպես խրատական խոսքերն ու բարի գործերը», - կարդում ենք նույն խրատանիում[9]:

Սա նկատի ունենալով՝ հատուկ ուշադրությամբ է պետք ընտրել դասավանդվող գեղարվեստական նյութի թեմաները՝ բացառելով թյուրընկալումը կամ տարաբնույթ մեկնաբանությունները, օրինակ, Ա. Քյուրքչյանի և Լ. Տեր-Գրիգորյանի «Մայրենի 2» դասագրքում զետեղված «Եղևնի»[10] փոքրիկ պատմվածքը քննարկումների ու բանավեճերի առիթ հանդիսացավ, քանի որ սյուժեով պայմանավորված տարընկալման և դրանից բխող թյուրընկալման խնդիր կար: Այսպես, այստեղ պատմվում էր որբ երեխայի մասին, ով, սոցիալական պայմաններից դրդված, ստիպված էր վաճառելու հորից մնացած միակ հիշատակը՝ եղևնին: Այս պարագայում հարց է առաջանում, թե ի՞նչ դաստիարակչական նպատակ է հետապնդում տվյալ դասը և ինչքանո՞վ է նպատակահարմար երկրորդ դասարանցի երեխաների մոտ նմանատիպ հարցեր քննարկել և ինչպե՞ս: Տվյալ պարագայում կարևորվում է ուսուցչի դերը. ինչպե՞ս է նա մատուցում նյութը, ի՞նչ տեսանկյունից: Կամ ինչքանո՞վ է նպատակահարմար ուսուցչի նախասիրությանն ու կամքին թողնել նմանատիպ հակաբևեռ և վիճահարույց խնդիրներ պարունակող ստեղծագործությունները: Կարծում ենք, նմանատիպ ստեղծագործությունները նպատակահարմար չէ տարրական դասարաններում քննարկելը: Եթե այնուամենայնիվ այս հարցերը պետք է վեր հանել, ապա գոնե դրանց պետք է անդրադառնալ ավելի բարձր դասարաններում:

---

[8] Հայ եկեղեցու հայրեր, հ. Ե, Պողոս Պատրիարք Ադրիանուպոլսեցի, Խրատի թանգարան, (18-19-րդ դդ.), Սուրբ Էջմիածին, 2009, էջ 71:

[9]Տե՛ս նույն տեղում, էջ 70:

[10]Տե՛ս Ա. Քյուրքչյան, Լ. Տեր-Գրիգորյան, Մայրենի 2, Երևան, 2007, էջ 89-91: Այսուհետև՝ ԱՔ,ԼԳ,Մ2:

Գլուխ 2. Պատմվածքի և փոքրածավալ պատումների դասավանդման ժամանակ արժեհամակարգի ձևավորումը

Բարձր ենք գնահատում մասնավորապես պատմվածքի՝ իբրև էպիկական ժանրի փոքրածավալ ստեղծագործության դաստիարակչական ներգործուն ուժն ու ճանաչողական գիտելիքի հաղորդման հնարավորությունը: Պատմվածքները կամ փոքրածավալ պատմությունները տարրական դասարանների դասագրքերում հաճախակի հանդիպող գեղարվեստական ստեղծագործություններից են, որը, իհարկե, պատահական չէ: Փորձը ցույց է տվել, որ երեխաները սիրում և հեշտությամբ ընկալում ու յուրացնում են դրանք:

Պատմվածքը, լինելով իր ընդգրկմամբ և ծավալով փոքր, դեպքերի նկարագրությամբ՝ խիստ սեղմ ու հակիրճ, ինչպես նաև գործող անձանց ընդգրկմամբ՝ սահմանափակ, հիմնական թեմայի կամ սյուժետային գծի զարգացմամբ՝ պարզ, ավելի մեծ հնարավորություն է տալիս ուսուցչին քիչ ժամանակահատվածում իրապատում օրինակի վրա մեծ դաստիարակչական աշխատանք ծավալելու, զարգացնելու լեզվամտածողությունը, բառապաշարը, բանավոր և գրավոր խոսքը: Բնական է, որ տարրական դասարանների դասագրքերում զետեղված պատմվածքները հատուկ ընտրությամբ են առանձնացված՝ հաշվի առնելով տվյալ տարիքային խմբի մտավոր կարողություններն ու հոգևոր, հուզական յուրահատկությունները: Ի դեպ, գաղտնիք չէ, որ սաների տարիքային յուրահատկությունը մեծ նշանակություն ունի դասավանդման և դաստիարակման հարցում: Ուսուցիչ-մանկավարժը շատ դեպքերում տրվող նյութի ծավալը, բարդության աստիճանը, դասավանդման և ուսուցման մեթոդներն ընտրելիս նախ նկատի է առնում սովորողների տարիքային առանձնահատկությունը:

Ինչ վերաբերում է պատմվածքների բովանդակային կողմին, ապա դրանք ևս վերցված են հատուկ ընտրությամբ: Սրանք վերաբերում են երեխաների տարեկիցներին կամ նրանց հուզող, հոգեհարազատ խնդիրներին, որոնք ավելի ազդեցիկ, ընկալելի են դարձնում հաղորդվող, ներկայացվող նյութը, օրինակ, «Փոքրիկ հայրենասերը» /տե՛ս ԴԳ,ՆՀ,Մ4, էջեր 64-68/ պատմվածքի հերոսը տասնմեկամյա տղա է՝ չորրորդ դասարանցիներին հասակակից, կամ «Պատմվածքն ընթերցող էր փնտրում» ստեղծագործության հերոսը երկրորդ դասարանցի Արան է /տե՛ս

ՎՍ,ՍԳ,ԿԹ,ՀԽ, Մ2 էջեր 8-9/, «Անակնկալի սպասումով» /ԿԹ,ՎՍ,ՆՀ,ԿՉ, Մ4, էջ 7/. հերոսները չորրորդ դասարանցիներ են, «Ամենատխրալին ու ամենաուրախալին». փոքրիկ պատմության սյուժեն ծավալվում է դասարանում, որը, բնական է, առօրյա, ինչ-որ առումով հոգեհարազատ միջավայրի տպավորություն է ստեղծում՝ նպաստելով նյութն առավել խորությամբ ընկալելուն: Նմանատիպ եղանակով հաղորդվում են նաև լեզվական, քերականական գիտելիքներ, օրինակ, «Քիչ ենք, բայց ձայնավոր ենք» /ՎՍ,ՍԳ,ԿԹ,ՀԽ, Մ2 էջ15/, «Չարաճճի Չ տառի արկածները» /ՎՍ,ՍԳ,ԿԹ,ՀԽ, Մ2 էջեր 16-17/, «Ինչպես բառերը գետն անցան» /ՎՍ,ՍԳ,ԿԹ,ՀԽ, Մ2 էջ 44-45/ և այլն:

Պատմվածքներն աչքի են ընկնում գեղարվեստական բարձր արժեքով՝ կերպարների գունեղությամբ, գործող անձանց ինչպես բազմազանությամբ ու գործողությունների աշխուժությամբ, այնպես էլ նրանց փոխհարաբերությունների նկարագրությամբ ու բարոյական, դաստիարակչական եզրակացություններով, հետևաբար սխալ կլիներ սահմանափակվել միայն պատմվածքը կարդալով ու դրանից հետո հարցեր տալով: Դա միանգամայն վերացական և ինքնանպատակ աշխատանք կլիներ: Նախևառաջ պատմվածքի ուսուցման ժամանակ հիմնական ուշադրությունը պետք է կենտրոնացնել գործող անձանց՝ որպես գեղարվեստական կերպարների ճիշտ ընկալման վրա: Պատմվածքների դասավանդման այս ձևն աշակերտներին հնարավորություն կտա թափանցելու գեղարվեստական ստեղծագործության ներքին բովանդակության մեջ, հասկանալու ոչ միայն գրվածը, այլև այն, ինչ հեղինակը ցանկացել է ասել ենթատեքստով: Յուրաքանչյուր պատում-պատմվածքի ուսուցումն ունի դաստիարակչական նպատակ, պարունակում է որոշակի բարոյական եզրակացություն կամ խրատ: Ուստի, դրա բացահայտումից են կախված նյութի դաստիարակչական ու գեղագիտական ազդեցությունն ու կայունությունը: Այս առումով հետաքրքրական են անձնավորմամբ կամ դրա տարրերով ձևավորված պատմվածքները, մանավանդ որ նմանատիպ ստեղծագործություններն ունեն ներազդման մեծ ուժ. այդ տարիքի երեխաները մեծամասամբ կենդանիներ շատ են սիրում, և նրանց օրինակը կարող է ավելի ազդեցիկ և ուսանելի լինի: Օրինակ՝ այս առումով հետաքրքրական է «Շնիկ»[11]

[11] Տե՛ս Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան, Մայրենի 4, Երևան, 2010, էջ 31: Այսուհետև՝ ԴԳ,ՆՀ,Մ4:

պատմվածքը, որին անդրադառնալիս չափազանց կարևոր է ուշադրություն դարձնել կենդանու կերպարի ճիշտ ընկալման վրա: Փաստորեն, տվյալ պարագայում մենք գործ ունենք անձնավորման հետ, որն արժանի է հատուկ ուշադրության, քանի որ ենթադրում է ընկալման որոշակի բարդություն: Այն պետք է ներկայացնել այնպես, որ երեխան ճիշտ ընկալի ցանկալի նյութը: Քանի որ տվյալ պարագայում դրա միջոցով են արտահայտվում և դաստիարակվում այնպիսի կարևոր, կարելի է ասել՝ նույնիսկ կենսական իրողություններ, ինչպիսիք են՝ կյանքի դժվարություններին դիմակայելու ձգտումը, մանավանդ երբ մարդ մնում է մենակ /ինչպես պատմվածքի հերոսը/, հասարակության կողմից ընդունվելը, կյանքում իր տեղը գտնելը, որոնք, անշուշտ, նաև խիստ արդիական են: Ուսուցիչն անընդհատ պետք է համեմատի ու զուգահեռներ անցկացնի մարդու և կենդանու կյանքին բնորոշ իրողությունները՝ ցույց տալով ու ընդգծելով կերպարին և մարդուն բնորոշ ընդհանրությունները: Այս առումով հետաքրքրական է նաև Վախթանգ Անանյանի «Արջի և վարազի կռիվը» /ՎԱՀԿԵ, Մ3, էջեր 39-40/ ստեղծագործությունը, որտեղ առկա են անձնավորման տարրերը միայն: Այստեղ արդեն ուսուցիչը պետք է ընդգծի կենդանիների կենսակերպի դրական և բացասական գծերը՝ համեմատելով մարդկային կյանքում առկա համարժեք իրողությունների հետ: Բայց այս պարագայում ցանկալի է, որ ուսուցիչն աշակերտին անընդհատ մղի ինքնուրույն եզրակացություններ անելուն՝ առաջարկվող համապատասխան հարցերի կամ առաջադրանքների միջոցով: Օրինակ՝ *Ինչո՞ւ վարազը մոլեգնած մռնչաց և հարձակվեց արջի վրա: Ընտրի՛ր քո կարծիքով ճիշտ տարբերակը և քննարկի՛ր ընկերոջդ հետ. արջը կամ վարազը ճիշտ կամ սխալ վարվեց, որովհետև….* և այլն: Այս և նման առաջադրանքները զարգացնում են ինքնուրույն մտածելակերպը՝ ձևավորելով երեխաների մեջ սեփական կարծիք ունենալու կարևորագույն հատկանիշը: Այս և մյուս բոլոր դեպքերում ցանկալի է, որ աշակերտն ինքը փորձի եզրահանգումներ կատարել՝ գնահատելով խնդրո առարկան:

Պատմվածքն իր ժանրային առանձնահատկություններով որոշ չափով նման է հեքիաթին: Դասավանդման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ընդհանրություններն ու տարբերությունները՝ պատմվածքի ուսուցումն առավել արդյունավետ ուղիով տանելու համար: Նկատենք, որ պատմվածքի և հեքիաթի ժանրային յուրահատկություններն իմանալը բխում է նաև առարկայական

չափորոշչային պահանջներից. *տարրական դպրոցն ավարտողը պետք է իմանա հեքիաթի և պատմվածքի տարբերությունը*[12]: Նշենք, որ մայրենիի դասագրքերում ևս պատմվածքի ժանրային առանձնահատկությունները ներկայացվում է՝ համեմատելով հեքիաթի հետ /տե՛ս ԴԳ,ՆՀ, Մ3, էջ 84/:

Անշուշտ, հեքիաթը երեխաների համար ամենասիրելի ժանրերից է, սակայն, կարծում ենք, որ ճշմարտապատում ստեղծագործությունների ունեցած ներգործուն ուժն ու դաստիարակչական դերն անհամեմատ ավելի ուժեղ է, քանի որ իրականության, կյանքի տիպական օրինակները ներկայացնելով՝ ժամանակակից երեխայի համար դրա օրինակն անհամեմատ համոզիչ է: Ըստ այդմ էլ՝ պատմվածքի ավանդման ժամանակ միշտ էլ հատուկ ուշադրություն է դարձվել դրա հուզական կողմի ճիշտ ու խորն ընկալման վրա:

Տարրական դասարաններում կարևոր է պատմվածքներին ու փոքրիկ պատումներին անդրադառնալ նաև այն առումով, որ դրանք զարգացնում են ընթերցողի երևակայությունն ու տրամաբանական մտածողությունը, նպաստում են քննադատական վերաբերմունքի ձևավորմանը: Ուստի, պատահական չէ, որ միշտ էլ պատմվածքները՝ իբրև դաստիարակչական բարձր արժեք ունեցող ստեղծագործություններ, տեղ են գտել տարրական դպրոցի դասագրքերում որպես երեխաներին կարդալ, պատմել, մտածել ու դատել սովորեցնելու միջոց:

Ինչպե՞ս հասցնել ուսումնական նյութը աշակերտների գիտակցությանը՝ ապահովելով այսպես կոչված մնացորդային լիարժեք գիտելիք: Ինչպե՞ս հետաքրքրել սովորողներին, որպեսզի նրանք կարողանան ընդունել գիտելիքը՝ հարկ եղած դեպքում գործնականում ճիշտ կիրառելով այն: Ինչպե՞ս տրամադրել երեխաներին դրականորեն դեպի գիտելիքը և օգնել նրանց գիտելիքը համոզմունք դարձնելու հարցում: Ինչպե՞ս սովորեցնել բոլորին և՛ նրանց, ովքեր հետաքրքրությամբ են սովորում, և՛ նրանց, ովքեր այնքան էլ մեծ ձգտում չունեն դեպի ուսումը: Այս և նմանատիպ հարցերը մանկավարժության կարևորագույն խնդիրներից են, որոնք շարունակում են մտահոգել ժամանակակից ուսուցչի ևս, և առավել կամ պակաս չափով առնչվում են դասավանդման մեթոդի ընտրության հետ:

---

[12] Տե՛ս Տարրական դպրոցի առարկայական չափորոշիչներ, Գիտելիքների համակարգ, Տարրական դպրոց ավարտողը պետք է իմանա, Մակարդակ երրորդ:

Մանկավարժության զարգացմանը զուգահեռ մարդկությունն անընդհատ եղել է ուսուցման գործընթացն արդյունավետ դարձնող և սովորողների մասնակցությունը խթանող մեթոդների փնտրտուքի մեջ: Ինչ վերաբերում է արդի մանկավարժությանը, ապա այսօր ևս, տարիքային յուրահատկությունները հաշվի առնելով, առաջարկվում են տարաբնույթ մեթոդներ ուսումնառության որակը բարձրացնելու համար:

Այսօր արդյունավետ է համարվում համագործակցային մեթոդների գործադրումը: Ընդ որում, ընդգծենք, որ սրանք առաջին անգամ ընդունվել, գործադրվել ու փորձարկվել են նախ տարրական դասարաններում: Փաստորեն, տարրական դասարանները հիմնաքարային են ոչ միայն գիտելիքի հաղորդման և ընկալման, այլև համապատասխան մեթոդների գործադրման առումով:

Ընդհանրապես, նպատակասլաց և արդյունավետ ուսուցումը ենթադրում է ուժերի, միջոցների և ժամանակի նվազագույն ծախսմամբ հնարավորինս բարձր արդյունքների ապահովում: Մեթոդների ընտրություն ևս ծառայելու է ուսուցման որակի բարձրացմանն ու դրա արդյունավետության աճին, ինչպես նաև սովորողների ակտիվացմանը: Ինչ վերաբերում է ուսուցման համագործակցային մեթոդներին, ապա դրանց կիրառումն ուսուցչին հնարավորություն է տալիս համապատասխան իրադրություններում սովորողների մեջ խթանելու հոգեկան գործընթացների, անձնային կարևորագույն որակների, մտածողության կերպերի ու եղանակների, հաղորդակցական և համագործակցային կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը՝ նպաստելով անձի ընդհանուր զարգացմանը:

Ընդգծենք, որ թեև ժամանակի պահանջներին համաքայլ նոր մեթոդներ են ձևավորվում, սակայն համարյա միշտ դրանք հենվում են փորձված ավանդական մեթոդների լավագույն տարրերի վրա:

Այսպես, մասնագիտական գրականության մեջ համարյա նույն մեթոդական շղթան է առաջարկվում պատմվածքը դասավանդելու համար: Ե՛վ Աշոտ Տեր-Գրիգորյանի, և՛ Ջուլիետա Գյուլամիրյանի աշխատություններում առաջարկվում է դասավանդման մեթոդների հետևյալ շղթան[13]. **1.Նախապատրաստական զրույց**, երբ ուսուցիչը փորձում է տրամադրել երեխաներին առաջիկա նյութը լսելուն և ճիշտ

[13] Տեր-Գրիգորյան Ա. Ե., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, էջեր 192-195: Ջ. Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006, էջեր 153-156:

ընկալելուն: 2. **Բնագրի ամբողջական ընթերցում,** երբ ողջ նյութը ներկայացվում է աշակերտներին ամբողջությամբ: Ի դեպ, Ջ. Գյուլամիրյանն առաջարկում է, որ երկրորդ դասարանից սկսած՝ ուսուցիչը վստահի աշակերտներից որևէ մեկին առաջին ընթերցումը, որը, նյութի հաղորդման առումով, համարում է շահեկան տարբերակ[14]: 3. **Բնագրի ընթերցում մասերով**, երբ ուսուցչի կողմից նախապես բաժանված տրամաբանական ամբողջություն ներկայացող հատվածն ընթերցում են աշակերտները՝ հընթացս ընթերցանության կատարելով բառային աշխատանքներ՝ անծանոթ բառերի բացատրում, դարձվածքների, փոխաբերությունների, թևավոր խոսքերի մեկնաբանում, հոմանշային կամ հականշային փոքրիկ առաջադրանքներ և այլն: 4. **Աշխատանք բնագրի վրա.** Ուսուցչի օգնությամբ և ուղղորդմամբ աշակերտները փորձում են վերլուծել նյութը, հասկանալ ստեղծագործության հերոսների զգացումներն ու հույզերը, հեղինակի վերաբերմունքը գործող անձանց նկատմամբ: Բնագրի վրա աշխատելիս հատուկ ուշադրության է արժանի այն իրողությունը, որ ուսուցիչը կարողանա դասարանի բոլոր աշակերտներին ներքաշի աշխատանքի մեջ և ոչ մի երեխա անտեսված չմնա և կարողանա ներկայացնել իր տեսակետը: 5. **Բովանդակության վերարտադրում և պատմում:** Այս պարագայում կարևոր է ընթերցումից անմիջապես հետո պատմելով վերարտադրել, ապա՝ մեկնաբանել կարդացածն ու հասկացածը՝ օգտվելով նախապես կազմած հարցաշարից և հենակետային բառերից: **6.Ամփոփում:** Այս փուլը կարելի է համարել, թեևս ամենապատասխանատուն, երբ ամփոփվում են նյութի հիմնական մտքի, ենթատեքստի, նրա արժեքային կողմի վերլուծությունը, ճանաչողական, բարոյակրթական հիմնական արժեքների, լեզվական իրողությունների ընկալման աստիճանն ու չափը:

Յուրաքանչյուր բարեխիղճ աշխատանք նախ սկսվում է համապատասխանաբար նախապատրաստումից: Ուսուցիչը պարտավոր է դասարան մտնելուց առաջ ծրագրել իր անելիքը՝ արտահայտելով այն դասի պլանում, որը ուղենշային, ոչ պարտադիր բնույթ ունի: Պայմանավորված ինչ-ինչ խնդիրներով ՝ ուսուցիչը կարող է փոխել նախապես ընտրած մեթոդը կամ դասի ընթացքը, սակայն, այնուամենայնիվ չափազանց կարևոր է դասարան մտնել նախապատրաստված: Ի դեպ, այն

[14] Ջ. Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006, էջ 154:

վերաբերում է ինչպես արհեստավարժ, այնպես էլ սկսնակ ուսուցիչներին, որոնք նախապատրաստման և ուղղորդման ավելի մեծ կարիք ունեն: Այսպես, բերենք դասի պլանի նմուշ օրինակ.

Դասի պլան

Թեման՝ Լավ ընկերը

Ժամաքանակը՝ 2 դասաժամ

Դասի նպատակները

1. Զարգացնել աշակերտների ընթերցելու տեխնիկան, հասնել նրան, որ սովորողները հասկանալով ընթերցեն բնագիրը,
2. Տրամաբանական հաջորդականությամբ կարողանան վերարտադրել նյութը, կարողանան բնութագրել գործող անձանց:
3. Զարգացնել աշակերտների տրամաբանված, ինքնուրույն խոսք կառուցելու կարողությունը:
4. Հարստացնել աշակեևտների բառապաշարը:
5. Հիմնավորել այնպիսի դրական հատկանիշներ, ինչպիսիք են մարդասիրությունը, ազնվությունը, կարեկցանքը, բարությունը:

Դասի կահավորումը: Ապահովել պրոեկտոր:

Դասի ընթացքը 1-ին դասաժամ

1. Կազմակերպչական պահ (հաճախումների ստուգում, մատյանի գրանցում):
2. Տնային առաջադրանքների քանակային, ապա որակայաին ստուգում:
3. Խթանման փուլում մտագրոհ մեթոդի կիրառմամբ առանձնացնել *ընկեր* բառի ընկալումն աշակերտների մտապատկերում՝ նշելով բառի իմաստներն ու ներկայացնել տվյալ բառի ստուգաբանությունը՝ *ընդ+կեր*:
4. Պատմության ընթերցում: Այն կատարել՝ կիրառելով կանխագուշակության աղյուսակի մեթոդը:

Առաջին մաս		
Քո կարծիքով ի՞նչ է լինելու:	Ի՞նչ փաստեր կան:	Ի՞նչ եղավ:
Մարդը ճամփորդության ելավ վտանգներով լի ճանապարով:	Դա ոլորապտույտ և ամայի ճանապարհ էր, որի երկու կողմերում հսկայական ապառաժներ էին վեր խոյանում: Ճանապարհը նաև վտանգավոր էր, որովհետև քարերի հետևում	Ավազակները հարձակվեցին նրա վրա, խլեցին քսակը, ծեծեցին նրան, նույնիսկ գողացան հագուստը և փախան: Քանի որ անմարդաբնակ

	դարանակալում էին ավազակ-ներ: Մարդը միայնակ էր ճամփորդում, քսակում էլ բավական շատ փող ուներ:	վայր էր ոչ ոք ճամփորդին օգնության չհասավ:
Երկրորդ մաս		
Քո կարծիքով ի՞նչ է լինելու:	Ի՞նչ փաստեր կան:	Ի՞նչ եղավ:
Հանկարծ վիրավորը մոտեցող ոտնաձայներ լսեց. - Օգնությո՜ւն, - կանչեց նա, - խնդրում եմ, օգնե՛ք ինձ:	Այն մարդը, որն իջնում էր ճանապարհով, լավ էր հագնված: Նա նայեց ճանապարհին ընկած խեղճ վիրավորին ու նկատեց արյունը	«Եթե ես մոտենամ և օգ-նեմ այս խեղճին, - մտա-ծեց նա, կարող եմ իմ շքեղ հագուստը փչաց-նել»: Այդ պատճառով էլ ձևացրեց, թե չի տեսել ընկածին:
Երրորդ մաս		
Քո կարծիքով ի՞նչ է լինելու:	Ի՞նչ փաստեր կան:	Ի՞նչ եղավ:
Քիչ հետո կրկին ոտնաձաներ լսվեցին: Վիրավոր ճամփորդն ուժերը հավաքեց ու կանչեց. -Օգնությո՜ւն, օգնությո՜ւն:	Անցորդը շտապում էր: Նա, իհարկե, լսեց օգնության կանչող վիրավորի ձայնն ու մի հայացք գցեց նրա վրա, սակայն գլուխն իսկույն շրջեց:	«Եթե օգնեմ այս մարդուն, կուշանամ: Ձևացնեմ, իբր չլսեցի», - որոշեց նա ու քայլերն արագացնելով շարունակեց ճանապարհը:
Չորրորդ մաս		
Քո կարծիքով ի՞նչ է լինելու:	Ի՞նչ փաստեր կան:	Ի՞նչ եղավ:
Հանկարծ վիրավորը կրկին մոտեցող ձայն լսեց, սակայն նա շատ էր թուլացել, գրեթե ուժասպառ էր: Նա փորձեց ձայն տալ, օգնության կանչել, բայց կարողացավ միայն հազիվ լսելի ձայնով շշնջալ. - Օգնե՛ք ինձ, խնդրում եմ, օգնե՛ք ինձ:	Օտարականը, որ լսեց վիրավորի թույլ կանչը, նայեց ճանապարհին ընկած մարդուն ու անմիջապես գուշակեց կատարվածը:	Նա խնամքով մաքրեց վիրավորի վերքերն ու վիրակապեց, ջուր տվեց, հետո զգուշությամբ նստեցրեց ավանակի վրա, որպեսզի հասցնի նրան մոտակա իջևանատուն:

Ընթերցանության յուրաքանչյուր հատվածից հետո առաջարկվող բառային աշխատանք.

1. Գտի՛ր հոմանիշ բառերը. հսկայական, անմարդաբնակ, շքեղ, ոլորապտույտ, ծուռումուռ, ճոխ, խոշոր, ամայի:
2. Գրի՛ր վտանգավոր, հսկայական, մոտենալ, թուլանալ և ավարտել բառերի հականիշները:
3. Ջուր և հույս արմատներով բառե՛ր կազմիր:
4. Ի՞նչ է *քսակը*: *Քսակ* է կոչվում այն փոքրիկ տոպրակը, որի մեջ փող էին պահում:
5. Հիմա քսակի փոխարեն ի՞նչ են օգտագործում:

Բանավոր խոսքը զարգացնող առաջադրանքներ

1. Նկարագի՛ր այն երկու անցողներին, որոնք չօգնեցին վիրավորին:
2. Հատկանիշ ցույց տվող 3-4 բա՛ռ ասա, որոնցով կբնութագրերի անցորդներին:
3. Ինչպես կվարվերի, եթե վիրավոր մարդը քո ճանապարհին ընկած լիներ:
4. Քո կարծիքով օտարականն ինչո՞ւ օգնեց վիրավորին:
5. Ո՞րն է այս պատմության հիմնական միտքը:
6. Որևէ մեկին երբևէ օգնե՞լ ես:
7. Պատմի՛ր քո ամենալավ ընկերոջ մասին:

Շարունակի՛ր ասացվածքների շղթան. 1.Բարեկամը նեղ օրվա համար է: 2.Ընկերոջը վտանգի մեջ են ճանաչում: 3.Հավքը թևով կթռչի, մարդը բարեկամով:

Տնային աշխատանք: Կարդալ բնագիրը, սովորել բառերը, նախապատրաստվել բնագիրը պատմելուն:

2-րդ դասաժամ

«Լավ ընկերը». բովանդակության վերարտադրում, բառակազմական առաջադրանքներ

Իմաստի ընկալման փուլում կատարել բնագրի շուրջ հետևյալ առաջադրանքները.

ա/ բնագրի ընթերցում և սովորած բառանյութի ամրապնդում,

բ/ բնագիրը բաժանել հատվածների և դեպքերի հաջորդականությամբ ներկայացնել:

գ/ նյութի բովանդակային վերարտադրում:

Կշռադատման փուլում

1. Վեննի դիագրամի օգնությամբ համեմատել անցորդներին և նրանց արքագիծը.

2. Ծավալել զրույց եսասիրության և անտարբերության մասին: Հասնել նարան, որ երեխաներն արտահայտեն իրենց կարծիքը այդ արատավոր հատկանիշների նկատմամբ:
3. Հարց: Ինչպե՞ս կվարվերի դու, եթե քեզանից օգնություն խնդրեին այն ժամանակ, երբ դու ինքդ շատ գործեր ունես և զբաղված ես:
4. Բառակազմական աշխատանք: Ա/ Ոտնաձայն բառը բաղադրիչների՛ բաժանիր: Երկրորդ արմատով բարդ բառե՛ր կազմիր: Բ/ *Ընթանալ, գնալ, լվանալ* բառերի արմատներով և *-ացք* ածանցով բառե՛ր կազմիր *հայացք* բառի նմանողությամբ:
5. Տնային առաջադրանք: Բառարանից օգտվելով՝ գտի՛ր վտանգավոր և հսկայական բառերի հականիշները: Գրքից արտագրել և սովորել դասի վերջում տրված բառախաղը:

Եզրակացություն

Ուսումնասիրելով խնդրո առարկան՝ եկանք հետևյալ եզրահանգումներին.

- ✓ Ուսումնառությունը և դաստիարակությունը պետք է տանել այն ուղղությամբ, որ այն նպաստի ազգային լեզվամտածողության, լեզվական ճաշակի և աշխարհայացքի ձևավորմանը: Աշակերտը պետք է գիտակցի, հասկանա մայրենի լեզվի և ազգային պատկանելիության սերտ կապը, ինչպես նաև մայրենի լեզվի և գրականության արժեքների ձեռքբերման կարևորությունը, ճանաչի իր երկիրը, նախնիներին, առասպելական հերոսներին՝ դաստիարակվելով նրանց օրինակով:
- ✓ Ազգային արժեհամակարգը պետք է տեսնել համամարդկային համատեքստում՝ լինելով այդ արժեքների կրողը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 3, Երևան, 2008, «Էդիթ պրինտ» հրատարակչություն, էջեր 159:
2. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 4, Երևան, 2010, «Էդիթ պրինտ» հրատարակչություն, էջեր 191:
3. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 3, մեթոդական ուղեցույց, Երևան, 2008, «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, էջեր 71:
4. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 4, մեթոդական ուղեցույց, Երևան, 2009, «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, էջեր 111:
5. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006, «Զանգակ - 97» հրատարակչություն, էջեր 326:
6. Խաչերեան Լ., Գրիգոր Պահլաւունի Մագիստրոս (985-1058) Կեանքն ու գործունէութիւնը, Լոս Անճելըս, 1987, «Ալքո» հրատարակչություն, էջ 451:
7. Հայ եկեղեցու հայրեր, հ. Ե, Պողոս Պատրիարք Ադրիանուպոլսեցի, Խրատի թանգարան, (18-19-րդ դդ.), Սուրբ Էջմիածին, 2009, էջ 324:
8. ՀՀ ԿԳ նախարարություն, Կրթական ծրագրերի կենտրոն, Կրթության ազգային ինստիտուտ, Տարրական դասարանների հայոց լեզու և մաթեմատիկա, Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների պլան և նյութեր /կրթակարգ, չափորոշիչներ, առարկայական ծրագրեր, ուսուցման նյութեր, նոր մեթոդներ/, Երևան, 2006, էջ 148:
9. Ջրբաշյան Էդ., Մախչանյան Հ., Գրականագիտական բառարան, Երևան, 1972, «Լույս» հրատարակչություն , էջ 296:
10. Սարուխանյան Ս., Միրումյան Մ., Դիշաղաջյան Ն., Փուլային ուսուցման եղանակ, Երևան, 2014, «Զանգակ» հրատարակչություն, էջեր 158:
11. Սարգսյան Վ. Ա., Ս. Գրիգորյան, Կ. Թորոսյան, Հ. Խաչատրյան, Մայրենի 2, Երևան, 2008, «Մակմիլան Արմենիա» հրատարակչություն, էջեր 159:
12. Սարգսյան Վ.Ա., Մայրենի 1, Երևան, 2009, «Մակմիլան Արմենիա» հրատարակչություն, էջեր 63:
13. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Մայրենի 1, Երևան, 2010, «Էդիթ պրինտ» հրատարակչություն, էջեր 63:

14. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Մայրենի 2, Երևան, 2008, «Էդիթ պրինտ» հրատարակչություն, էջեր 159:
15. Տեր-Գրիգորյան, Ա. Ե., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, «Լույս» հրատարակչություն, էջ 563:
16. Эстетическое воспитание в начальной школе/Под ред.Шацкой В.Н..- М.,Академия пед, наук РСФСР, 1959.